# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 01.03.2019թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի**
**թիվ ԳԲՔԱ-ԱՄ-2019/21**

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձն՝ ի դեմս Միհր Անանյանի

Մասնակցությամբ՝

«Խաչպար» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ս. Բալասանյանի (պետական ռեգիստրի վկայական թիվ 03 Ա 053435)

««Էջմիածին» Բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ի լիազորված ներկայացուցիչ՝ Լ. Քոչարյանի (լիազորագիր տրված՝ 20.02.2019թ.)

Քննելով ««Էջմիածին» Բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար քիմիական նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԷԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-19/03» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի շրջանակներում «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 18.02.2019թ. ներկայացված և 19.02.2019թ. վարույթ ընդունված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲՔԱ-ԱՄ-2019/14 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>«Խաչպար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

«Խաչպար» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 18.02.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««Էջմիածին» Բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ն «Քիմիական նյութերի» ձեռքբերման նպատակով հայտարարություն է հրապարակել՝ «ԷԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-19/03» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի մասին, որը հաստատվել է գնահատող հանձնաժողովի 2019թ. փետվարի 11-ի թիվ 1 որոշմամբ: Հրավերի թիվ 26-րդ, 27-րդ, 28-րդ և 29-րդ չափաբաժինների մասով գրված են միևնույն՝ «բժշկական այլ նյութեր» բառերը:

Հրավերի Հավելված թիվ 4՝ «Պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագիր»-ի Հավելված թիվ 1՝ «Տեխնիկական բնութագիր – գնման ժամանակացույցում»՝ հրավերի թիվ 26-րդ, 27-րդ, 28-րդ և 29-րդ չափաբաժինների մասով «անվանումը և ապրանքային նշանը» սյունակներում գրված են կոնկրետ արտադրողների կոնկրետ ֆիրմային՝ բրենդային անվանումները, սակայն ոչ այդ սյունակներում և ոչ էլ որևէ այլ տեղ չի պահպանվել նման դեպքերում «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պահանջը՝ «5.Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Ընկերությունը նշել է, որ ոչ մի տեղ առկա չեն «կամ համարժեք» բառերը:

Ընկերությունը՝ ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի թիվ 46 հոդվածի 1-ին մասի և 3-րդ մասի 1-ին կետով, բողոքարկում է Պատվիրատուի՝ ««Էջմիածին» Բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ի կողմից հայտարարված «ԷԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-19/03» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի 2019թ. փետրվարի 11-ի թիվ 1 որոշմամբ հաստատված՝ «Քիմիական նյութերի» ձեռքբերման նպատակով հայտարարված էլեկտրոնային աճուրդի հրավերը թիվ 26-րդ, 27-րդ, 28-րդ և 29-րդ չափաբաժինների մասով:

Ղեկավարվելով Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ Ընկերությունը խնդրել է պարտավորեցնել «ԷԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-19/03» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին փոփոխելու «ԷԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-19/03» ծածկագրով հրավերի թիվ 26-րդ, 27-րդ, 28-րդ և 29-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերը:

«Խաչպար» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 21.02.2019թ. ժամը 10:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, տնօրենը ապահովել է իր մասնակցությունը, ով հայտնել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

**1.<u>««ԷՋՄԻԱԾԻՆ» Բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>**

««ԷՋՄԻԱԾԻՆ» Բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ն 20.02.2019թ. թիվ 58-077 գրությամբ հայտնել է, որ ««ԷՋՄԻԱԾԻՆ» Բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ի 2019թ. կարիքների համար սույն թվականի փետրվարի 13-ին էլեկտրոնային աճուրդի ընթացակարգով հայտարարվել է ԷԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-19/03 ծածկագրով քիմիական նյութերի գնման մրցույթ՝ բաղկացած 66 չափաբաժնից: Հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել փետրվարի 20-ը:

Պատվիրատուն հայտնել է, որ հրավերի թիվ 26, 27, 28 և 29-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերը կազմվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն, այն է՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Քանի որ նշված քիմիական նյութերը հանդիսանում են հակասեպտիկ և վարակազերծիչ միջոցներ և կիրառվում են բուժհաստատությունում, ապա հաշվի է առնվում նրանց օգտագործման արդյունավետությունը, հարմարավետությունը և ախտահանիչ ազդեցության բարձր որակը:

Պատվիրատուն հայտնել է, որ eauction.am կայքում տեղադրված հրավերի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում 26, 27, 28 և 29 չափաբաժինների անվանումը նշված է բժշկական այլ նյութեր, իսկ տեխնիկական բնութագիր սյունակում նշված է յուրաքանչյուր նյութի տեխնիկական բնութագիրը:

Պատվիրատուն հայտնել է, որ յուրաքանչյուր մասնակից կարող էր մասնկացել մրցույթին, եթե առաջարկված ախտահանիչ նյութերը ունեին այլ ֆիրմային անվանում, բայց հրավերով պահանջվող համանման տեխնիկական բնութագիր:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 21.02.2019թ. ժամը 10:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը, միաժամանակ ընդունել է այն փաստը, որ հրավերի թիվ 26, 27.28 և 29 չափաբաժիններով նշվել է անվանումներ և չի նշվել «կամ համարժեք» բառերը:

**3. ԳԲԽ-ԱՄ-2019/21 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը**

ԳԲԽ-ԱՄ-2019/21 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ««ԷՋՄԻԱԾԻՆ» Բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ի կողմից ««ԷՋՄԻԱԾԻՆ» Բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար քիմիական նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԷԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-19/03» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ:

2. Աճուրդի թիվ 26-րդ, 27-րդ, 28-րդ և 29-րդ չափաբաժինների մասով նախատեսվել է գնման ենթակա ապրանքների հետևյալ տեխնիկական բնութագիրը.

| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | անվանումը և ապրանքային նշանը | տեխնիկական բնութագիրը |
|---|---|---|
| 26 | Սավոն Դու 1լ | Ձեռքերը ախտահանող օճառ 1լ |

| | | |
|---|---|---|
| 27 | Ժավելի Սոլիդ | Դիքլորիզոցիանաթթվի Na-ական աղ, 1կգ-320հաբ |
| 28 | Անիոս-G | Անիոսժել 85 ՆՊՍ 1լ հեղուկ - Դենատուրացված էթանոլ 70,00 ± 5%, ինչպես նաև հարթեցնող և փափկեցնող հավելումներ նախատեսված ձեռքերի մաշկի խնամքի համար: Այն իրենից ներկայացնում է հիպոալերգիկ, տիքսոտրոպիկ գել (մաշկի վրա վեր է ածվում հեղուկի և թափանցում է անգամ մաշկի միկրոճեղքերի մեջ): Տոքսիկ չէ, չունի տեղային գրգռիչ, մաշկա-ռեզորբտիվ և գերզգայունացնող ազդեցություններ: |
| 29 | Աբսոլյուցիդ -Էնզիմ | Աբսոլյուցիդ-Էնզիմ 1լ խտանյութ :ԱԴԱՔ-12%; ԴԴԱՔ 8%; պոլիմեր N, N-1,6հեքսանդիիլբիս1,6 հեքսադիամին հիդրոքլորիդի հետ 2%; ֆերմենտներ ինչպես նաև իզոպրոպիլ սպիրտ և այլ ֆունկցիոնալ հավելումներ և կոռոզիայի ինհիբիտորներ;PH-7,5;մակերևույթային ակտիվ նյութեր՝ ՄԱՆ-եր: Օգտագործման ժամկետը աշխատանքային լուծույթի -28 օր է նախատեսված է բազմակի օգտագործման համար:Ախտահանիչ նյութն օժտված է հակամանրէային ակտիվությամբ գրամդրական և գրամբացասական մանրէների, վիրուսների և սնկերի նկատմամաբ:Ախտահանիչ նյութը նախատեսված է բժշկական նշանակության գործիքների , էնդոսկոպների ՝ ախտահանման , նախամանրէազերծումային և էնզիմատիկ մաքրման համար, երեքը մեկում միաժամանակ 15 րոպեի ընթացքում: |

## 4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով «Խաչպար» ՍՊԸ-ի 18.02.2019թ. բողոքը՝ կից փաստաթղթերով, ««ԷՋՄԻԱԾԻՆ» Բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ի 20.02.2019թ. թիվ 58-077 գրությունը՝ կից փաստաթղթով, «ԷԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-19/03» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամաբ հաստատված «գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է

բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ՝ բացառությամբ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված պայմաններով գնում կատարելու դեպքերի:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության

որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. ***<u>Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ</u> առևտրային նշանի, <u>ֆիրմային անվանմանը</u>, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: <u>Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը</u>:***

««ԷՋՄԻԱԾԻՆ» Բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ի կողմից ««ԷՋՄԻԱԾԻՆ» Բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար քիմիական նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԷԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-19/03» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ:

Աճուրդի թիվ 26-րդ, 27-րդ, 28-րդ և 29-րդ չափաբաժինների մասով նախատեսվել է գնման ենթակա ապրանքների հետևյալ տեխնիկական բնութագիրը.

| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | անվանումը և ապրանքային նշանը | տեխնիկական բնութագիրը |
|---|---|---|
| 26 | Սավոն Դու 1լ | Ձեռքերը ախտահանող օճառ 1լ |
| 27 | Ժավելի Սոլիդ | Դիքլորիզոցիանաթթվի Na-ական աղ, 1կգ-320հաբ |
| 28 | Անիոս-G | Անիոսժել 85 ՆՊՍ 1լ հեղուկ - Դենատուրացված էթանոլ 70,00 ± 5%, ինչպես նաև հարթեցնող և փափկեցնող հավելումներ նախատեսված ձեռքերի մաշկի խնամքի համար: Այն իրենից ներկայացնում է հիպոալերգիկ, տիքսոտրոպիկ գել (մաշկի վրա |

| | | |
|---|---|---|
| | | վեր է ածվում հեղուկի և թափանցում է անգամ մաշկի միկրոճեղքերի մեջ): Տոքսիկ չէ, չունի տեղային գրգռիչ, մաշկա-ռեզորբտիվ և գերզգայունացնող ազդեցություններ: |
| 29 | Աբսոլյուցիդ-Էնզիմ | Աբսոլյուցիդ-Էնզիմ 1լ խտանյութ :ԱԴԱՔ-12%; ԴԴԱՔ 8%; պոլիմեր N, N-1,6հեքսանդիիլբիս1,6 հեքսադիամին հիդրոքլորիդի հետ 2%; ֆերմենտներ ինչպես նաև իզոպրոպիլ սպիրտ և այլ ֆունկցիոնալ հավելումներ և կոռոզիայի ինհիբիտորներ;PH-7,5;մակերևույթային ակտիվ նյութեր՝ ՄԱՆ-եր: Օգտագործման ժամկետը աշխատանքային լուծույթի -28 օր է նախատեսված է բազմակի օգտագործման համար:Ախտահանիչ նյութն օժտված է հակամանրէային ակտիվությամբ գրամդրական և գրամբացասական մանրէների, վիրուսների և սնկերի նկատմամբ:Ախտահանիչ նյութը նախատեսված է բժշկական նշանակության գործիքների , էնդոսկոպների ՝ ախտահանման , նախամանրէազերծումային և էնզիմատիկ մաքրման համար, երեքը մեկում միաժամանակ 15 րոպեի ընթացքում: |

«Խաչպար» ՍՊԸ-ն ներկայացված բողոքով հայտնել է, որ Աճուրդի հրավերի թիվ 26-րդ, 27-րդ, 28-րդ և 29-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերի «անվանումը և ապրանքային նշանը» սյունակներում գրված են արտադրողների կոնկրետ ֆիրմային անվանումներ:

Այսպես՝ «Օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանին, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: ***Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:***

Այսպիսով, ուսումնասիրելով Աճուրդի հրավերի տեխնիկական բնութագիրը վիճարկվող 26, 27, 28 և 29-րդ չափաբաժինների մասով, արձանագրում եմ, որ Պատվիրատուի կողմից խախտվել է Օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պահանջը, քանի որ Պատվիրատուն վերը նշված չափաբաժինների գնման առարկայի բնութագրերը սահմանելիս հղում է կատարել ֆիրմային անվանմանը, այն է՝ «Սավոն Դու 1լ», «Ժավելի Սոլիդ», «Անիոսժել 85 ՆՊՍ» և «Աբսոլյուցիդ-Էնզի» և չի նշել «կամ համարժեք» բառերը,

հետևաբար գտնում եմ, որ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

# Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 18.02.2019թ ներկայացված բողոքը բավարարել, մասնավորապես՝ պարտավորեցնել «ԷԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-19/03» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին փոփոխելու «ԷԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-19/03» ծածկագրով՝ հրավերի թիվ 26-րդ, 27-րդ, 28-րդ և 29-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերը՝ այն համապատասխանեցնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

**ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անդամ՝** **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**